ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2024 թվականի №---Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿԱԶ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՂԱՆԴԻԼՅԱՆԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Որոշման №5 հավելվածով սահմանված ձևին համապատասխան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) Հանձնաժողով է ներկայացվում յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև հաջորդող տարվա մայիսի 25-ը,

բ) անհատ ձեռնարկատեր Հայկազ Անդրանիկի Ղանդիլյանը Հաշվետվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2024 թվականի մայիսի 30-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը անհատ ձեռնարկատեր Հայկազ Անդրանիկի Ղանդիլյանի նկատմամբ 2024 թվականի հուլիսի 8-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 8-ի №ԳԲ/34.2-Մ2-7/3078-2024 գրությամբ,

դ) անհատ ձեռնարկատեր Հայկազ Անդրանիկի Ղանդիլյանը վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) Որոշման №1 հավելվածի համապատասխանաբար՝ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն, հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ծառայություններ մատուցող կարգավորվող անձինք հաշվետվությունները Հանձնաժողով են ներկայացնում առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային եղանակով, էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները ներկայացվում են փաստաթղթերի էլեկտրոնային շարժի

համակարգի (Mulberry), էլեկտրոնային փոստի կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Էլեկտրոնային փոստով ներկայացման դեպքում՝ հաշվետվությունների ներկայացման օր է համարվում հաշվետվությունների և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհատ ձեռնարկատեր Հայկազ Անդրանիկի Ղանդիլյանը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջն, այն է՝ Հաշվետվությունը (և ուղեկցող գրությունը) Հանձնաժողով է ներկայացրել 2024 թվականի մայիսի 30-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջի խախտման համար անհատ ձեռնարկատեր Հայկազ Անդրանիկի Ղանդիլյանին նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հայկազ Անդրանիկի Ղանդիլյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2024թ.